ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՍՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁԻՆՔ**

Տիգրան Գալստյան

Արուսյակ Տերչանյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ

ՀՀ մշակույթի նախարարի խորհրդական

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

Թբիլիսի (Վրաստան)

2019 թվականի փետրվարի 18-20

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմ

- **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառմանը

Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Վիրահայոց Թեմի հրավերով 2019 թ. փետրվարի 18-20-ը գործուղվել էի Թբիլիսի (Վրաստան)՝ մասնակցելու Վրաստանի Խորհրդարանի գրադարանում կայացած Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառմանը:

Միջոցառման ընթացքում Հայ-վրացական բարեկամության մեծ ջատագով Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված շնորհավորական ուղերձներ հնչեցին ՀՀ և ՎՀ նախագահների անունից, ՀՀ ԿԳ նախարար Արայիկ

ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Հարությունյանի և այլ գերատեսչությունների ղեկավարների ու կառույցների ներկայացուցիչների կողմից: Միջոցառմանը ներկա էր Թումանյանի ծոռնուհին՝ Ելենա Կոլեսնիկովան, իսկ մյուս ծոռնուհին՝ Իրմա Սաֆրազբեկյանը, Գերմանիայից հղել էր իր շնորհավորանքի և երախտիքի ուղերձը:

Միջոցառմանը օրհնության և գնահատանքի խոսքով հանդես եկավ Վիրահայոց թեմի բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, ով շնորհավորելով ներկաներին՝ գնահատանքի խոսքեր ուղղեց կազմակերպիչներին՝ ի դեմս հոբելյանական հանձնախմբի:

Սրբազան Հայրը, իր խոսքում առանձնահատուկ կարևորելով ՀՀ մշակույթի նախարարության հետ ձեռք բերված ակտիվ համագործակցությունը, շնորհակալությունը. հայտնեց նախարարության ցուցաբերած աջակցության և այս կարևոր միջոցառմանը հայրենիքի հետ կապը ամրապնդելու գործում նախարարության ունեցած դերակատարման համար: Անդրադարձ կատարելով հոբելյանական միջոցառումներին ունեցած ավանդին՝ Տեր Վազգեն եպիսկոպոսը հատուկ Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված առաջին հուշամեդալները փոխանցեց ՀՀ կրթության և գիտության նախարար, Հովհաննես Թումանյանի տոնակատարության պետական հանձնաժողովի նախագահ Արայիկ Հարությունյանին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Ճիճինաձեին և IDeA հիմնադրամի նախագահ Ռուբեն Վարդանյանի ներկայացուցչին:

Որպես ՀՀ Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի ծննդյան 150-ամյակներին նվիրված նախարարության աշխատանքային խմբի ղեկավար՝ ընթաքում խոսեցի այն բոլոր աշխատանքների մասին, որոնք իրականացվել և իրականացվելու են ՀՀ-ում, կարևորեցի Վիրահայոց թեմի հետ մեկնարկած աշխատանքային ակտիվ համագործակցությունը և հետագա անելիքները:

Վրաստանում ստեղծված հոբելյանական միջոցառումները համակարգող ներկայացուցչական հանձնախումբում ՀՀ մշակույթի նախարարության ներկայացուցիչ

ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

նախարարի խորհրդական Արուսյակ Տերչանյանը մանրամասնեց այն բոլոր աշխատանքները, որոնցում իր ակտիվ մասնակցությունն է ունեցել ՀՀ մշակույթի նախարարությունը՝ գործակցելով Վիրահայոց թեմի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնի հետ: Նշվեց նաև Հովհաննես Թումանյանի և Կոմիտասի 150-ամյա հոբելյաններին նվիրված միջոցառումներին ՀՀ մշակույթի նախարարության հետագա աջակցության մասին, որոնք կշարունակվեն ողջ տարվա ընթացքում:

Այցի ընթացքում ծանոթացա հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության խնդիրներին և Վիրահայոց թեմի ենթակայությամբ գործող համանուն կենտրոնի գործունեությանը: Թեմական առաջնորդի կողմից հրավեր ստացա, առաջիկայում աշխատանքային այց ունենալ Թբիլիսի, առկա ուսումնասիրությունների հիման վրա քննարկել և լուծումներ գտնելու հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման հետ կապված մի շարք խնդիրներ վերաբերյալ:

Արուսյակ Տերչանյանը հանդիպում ունեցավ միջոցառմանը ներկա Վրաստանի իր գործընկերոջ հետ, քննարկվեց ինչպես տարվա ընթացքում հոբելյանական միջոցառումներին երկու երկրների համապատասխան գերատեսչությունների աջակցության շարունակության, այնպես էլ Վրաստանի այլ քաղաքներում և շրջաններում այն տարածելու և փոխադարձ հետաքրքրություններ ներկայացնող այլ հարցերի շուրջ: Անդրադարձան Վրաստանի մշակույթի նախարարության 2019 թվականին Ջավախքում իրականացվող «Բազմազանության» ծրագիրը Հովհ. Թումանյանին և Կոմիտասին նվիրված լինելու ծրագրի հետ կապված պայմանավորվածությունը կյանքի կոչելուն:

Այցի ընթացքում, հայկական պատվիրակությունը հյուրընկալվեց «Հովհ. Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում, ծանոթացավ Թումանյանի տան պատմության, այնտեղ ցուցադրված ցուցանմուշների, ինչպես նաև Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Դավիթ Ճիճինաձեի կողմից «Հովհ. Թումանյանի տուն»

ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ

կենտրոնին նվիրած Ամենայն հայոց բանաստեղծի 150 ամյակի հոբելյանի կապակցությամբ նվիրած բրոնզաձույլ արձանին:

ՀՀ պատվիրակության հետ միասին, այցելեցինք Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն, իրենց հարգանքի տուրքը մատուցելով, ինչպես Ամենայն հայոց բանաստեղծին, այնպես էլ այնտեղ թաղված հայոց մեծերին:

2019 թ. փետրվարի 18-20-ը այցը Թբիլիսի կարևոր էր ոչ միայն Հայաստան-սփյուռք համագործակցությունը և մշակութային կապերը ակտիվացնելու, այլև Վրաստանի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը հետսերտացնելու, նոր կապեր և պայմանավորվածություններ ձեռք բերելու և նոր համատեղ ծրագրեր մշակելու առումով:

- **ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

1. Մասնակցություն Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառմանը:
2. Ծանոթություն հայկական պատմամշակութային ժառանգության պահպանության խնդիրներին և Վիրահայոց թեմի ենթակայությամբ գործող համանուն կենտրոնի գործունեության հետ:
3. Այցելություն Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոն:
4. Հայաստան-սփյուռք համագործակցության և մշակութային կապերի ակտիվացում:
5. Վրաստանի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցության սերտացում:
6. Նոր կապերի և պայմանավորվածությունների ձեռքբերում, նոր համատեղ ծրագրերի մշակում:

Տիգրան Գալստյան

21.02.2019